

Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը Ձորաղբյուրում ներկա է գտնվել Բերքի տոնին

Հանգստյան օրերը մարզում գունառատ են:

Ջրվեժի Ձորաղբյուր բնակավայրում գործող Կանաչ ուսուցման կենտրոնում շարունակվում է ավանդական դարձած գյուղական կյանքի եւ ավանդույթների փառաստունը՝ Բերքի Տոնը:

Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը նախօրեին խորհրդականների հետ ներկա է գտնվել աշնանային գունագեղ միջոցառմանը, որը մի վայրում է համախմբել Հայաստանի, Արցախի ու արտերկրի ֆերմերներին:

Ցուցադրվել և վաճառքի են ներկայացվել արևահամ թարմ և վերամշակված համեղ մրգերը, բանջարեղենն ու այլ բարիքները: Այդ ամենը համեմված էր կենդանի երաժշտությամբ ուղեկցվող ավանդական երգ ու պարով

Շնորհակալություն փառաստունն իրականացնողներին: